ՄԱՔՍԱՅԻՆ ՔԱՐՏ

Տեղեկատվական ամփոփագիր

Ամերիաբանկը շարունակում է ներկայանալ նոր ժամանակակից ֆինանսական գործիքներով, որոն ուղղված են իր հաճախորդների գործունեության հարմարավետության ապահովմանը և ժամանակի տնտեսմանը:

Ընդլայնելով մեր կողմից առաջարկվող քարտերի տեսականին, ներկայացնում ենք իրավաբանական անձանց համար նախատեսված Մաքսային քարտ: Այս նոր առաջարկը թույլ կտա անկանխիկ մաքսային վճարումներ իրականացնել Հայաստանի բոլոր մաքսային կետերում:

Մաքսային քարտը նախատեսված է ներմուծող ընկերությունների և մաքսազերծման ծառայություններ տրամադրող կազմակերպությունների կողմից մաքսային ու հարկային վճարումներն առավել դյուրին և հարմարավետ իրականացնելու համար՝ առանց անհանգստանալու բավականաչափ դրամական միջոցների առկայության մասին:

Ժամանակն է անցում կատարել վճարումների իրականացման ժամանակակից և առաջադեմ տարբերակի

Ձեռք բերելով Ամերիաբանկի Մաքսային քարտը՝ Դուք կօգտվեք մի շարք առավելություններից.

- Քարտի սպասարկում
    - Քքարտի տրամադրման պահին Բանկում 3 ամսից ավել սպասարկվելու դեպքում՝
    - քարտի տրամադրում առանց սպասարկման վճարի,
    - անկանխիկ վճարումների հարմարավետություն և անվտանգություն,
    - խոշոր դրամական միջոցների տեղափոխման անհարմարությունից խուսափում:
- Քարտին կից վարկային գիծ
    - Վարկային գծի օգտագործման արտոնյալ ժամանակահատված,
    - Ապահովվածությունը՝ դրամական միջոցների շրջանառություն
    - շրջանառություն, o Արժույթը՝ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո,
    - Ցածր տոկոսադրույք արտոնյալ ժամանակահատվածին հաջորդող առաջին ամսվա համար
    - o ՀՀ դրամով տրամադրված վարկային գծերի համար արտոնյալ ժամկետ չի սահմանվում:

Քարտի թողարկման և օգտագործման սակագներն ու պայմաններն են՝

1. Մաքսային քարտը (այսուհետ՝ Քարտ) նախատեսված է իրավաբանական անձ և անհատ ձեռնարկատեր հաճախորդների համար:
2. Քարտի տրամադրման նպատակայնությունը՝ մաքսային տերմինալներում մաքսային, հարկային և այլ վճարումների իրականացում:
3. Քարտի թողարկման և օգտագործման սակագներն ու պայմաններն են՝

1	Քարտի տեսակը	Arca Classic
2	Քարտի արժույթը	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո
3	Քարտի թողարկում	անվճար
4	Քարտի տարեկան սպասարկում	10 000 դրամ, 3 ամիսից ավել սպասարկվող հաճախորդների համար՝ անվճար
5	Հավելյալ քարտի թողարկում	անվճար
6	Հավելյալ քարտի տարեկան սպասարկում	5 000 դրամ
7	Քարտի վերաթողարկում (կորստի, վնասման հափշտակման, PIN-ի կորստի կամ երրորդ անձանց հայտնի դառնալու դեպքում)	5 000 դրամ
8	Քարտի վերաթողարկում (քարտի ժամկետի լրացման դեպքում)	անվճար
9	Քարտի բլոկավորում	անվճար
10	Քարտի ապաբլոկավորում	անվճար
11	Կանխիկի տրամադրում	չի թույլատրվում
12	Մաքսային տերմինալներում անկանխիկ գործարքներ	անվճար
13	Այլ առևտրի կետերում անկանխիկ գործարքներ	3%
14	Քաղվածքի տրամադրում կամ ուղարկում էլեկտրոնային փոստով	անվճար
15	Քարտի վարկային սահմանաչափի վերանայում	3 000 դրամ
16	SMS հաղորդագրությունների ուղարկում	անվճար

Հաճախորդների առանձին խմբերի համար կարող են սահմանվել պլաստիկ քարտերի սպասարկման հատուկ սակագներ: Այդ խմբերի նկատմամբ սույն սակագները կիրառվում են, եթե հատուկ սակագներով այլ բան չի նախատեսված:

4. Քարտի ներքո տրամադրվող վարկային գծի պայմաններն են՝

Վարկային գծի սահմանաչափ	Ոչ ավել քան բանկային հաշիվներով առնվազն վերջին 3 ամիսների ընթացքում իրականացվող ամսական միջին շրջանառության 50%-ը, սակայն ոչ ավել քան 100 մլն. ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ: Մինչև 3 ամիս սպասարկվող հաճախորդների դեպքում, որպես սահմանաչափի որոշման հիմք է ծառայելու այլ բանկերում իրականացված շրջանառությունը, ինչպես նաև վարկ-գրավ հարաբերակցությունը:
Վարկային գծի ժամկետ	Մինչև 1 տարի
Տոկոսադրույք	• Արտոնյալ ժամկետի ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում գումարի օգտագործման պահից հաշվարկվում է՝ ○ ԱՄՆ դոլարին Եվրոյի դեպքում՝ 13%, • Արտոնյալ ժամանակահատվածին հաջորդող ամսվա ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում հաջորդ ամսից այդ պահին օգտագործած գումարի վրա հաշվարկվում է՝ 20%:
Տոկոսադրույք	ՀՀ դրամի դեպքում – 15%Արտոնյալ ժամանակահատվածին առաջին ամսվա ընթացքում պարտավորությունը ամբողջությամբ չմարելու դեպքում հաջորդ ամսից այդ պահին օգտագործած գումարի վրա հաշվարկվում է՝ 20%:
Տոկոսների հաշվարկման արտոնյալ ժամկետ	Գումարի օգտագործման ամսվա վերջին օր + 5 օր: ՀՀ դրամով տրամադրված վարկային գծերի համար արտոնյալ ժամկետ չի սահմանվում:
Օգտագործված գումարների մարում	Ժամկետի վերջում, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին օգտագործված գումարների մարում:
Տոկոսների մարում	Ժամկետի վերջում, ընդ որում, քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում:
Վարկային գծի տրամադրման վճար	Վարկային գծի սահմանաչափի 1%-ի չափով:

Վարկային գծի ապահովածություն՝	• 3 ամսից ավել հաճախորդների համար՝ Դրամական հոսքեր • Մինչև 3 ամիս հաճախորդների համար՝ դրամական հոսքեր և լրացուցիչ ապահովածություն:
Վարկ/ լրացուցիչ ապահովություն հարաբերակցությունը	Մինչև 70%
Կիրառվող այլ պայմաններ և տուգանքներ ժամկետանց գումարի դիմաց	Ժամկետանց Վարկային գծի նկատմամբ դադարում է Գծի սահմաններում ստացված Վարկերի օգտագործման համար Պայմանագրով նախատեսված տարեկան Տոկոսի հաշվարկումը և այդ գումարի նկատմամբ սկսվում է հաշվարկվել և կիրառվել տարեկան 24 տոկոս տոկոսադրույքը՝կետանցի յուրաքանչյուր օրվա համար, ժամկետանց Վարկային գծի նկատմամբ կիրառվում է նաև տույժ՝ ժամկետանց գումարի 0,1 տոկոսի չափով՝ կետանցի յուրաքանչյուր օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց վարկի 2.0% չափով:
Կիրառվող այլ պայմաններ և տուգանքներ ժամկետանց տոկոսի դիմաց	ժամկետանց տոկոսագումարի նկատմամբ հաշվարկվում և կիրառվում է 0,3% տոկոսադրույքը՝ յուրաքանչյուր ուշացված օրացուցային օրվա համար, իսկ 5 աշխատանքային օր ժամկետանց պարտավորության առկայության դեպքում՝ նաև տուգանք՝ ժամկետանց տոկոսագումարի 5.0 % չափով
Վաղաժամկետ պայմանագրի լուծում	Տույժ կամ տուգանք չի կիրառվում:
Հայտի ուսումնասիրության և հաճախորդին որոշման մասին ծանուցման ժամկետ	Մինչև 10 աշխատանքային օր՝ փաստաթղթերի ամբողջական փաթեթի ստացման օրվանից: Ուսումնասիրության ընթացքից ելնելով վերոնշյալ ժամկետը կարող է երկարաձգվել, բայց ոչ ավելի, քան ևս 10 աշխատանքային օր:
Վավերականության ժամկետ (Վարկային գծի տրամադրման մասին որոշման գործողության ժամկետ)	20 օր, եթե այլ բան նախատեսված չէ իրավասու մարմնի կայացրած որոշմամբ:

Հաջորդող գրավի թույլտվության սակագին	500 000 ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ)
Վարկի պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճար*	500 000 ՀՀ դրամ

* վարկավորման պայմանների վերանայման հայտի/դիմումի ուսումնասիրման վճարը ենթակա է վճարման հաճախորդի կողմից, վերջինիս նախաձեռնությամբ և ցանկությամբ ներկայացված վերանայման հայտի բավարարման դեպքում՝ Բանկի համապատասխան ստորաբաժանման կողմից այդ հայտի հիման վրա կատարված վերլուծության եզրակացության հիմքով: Ընդ որում, որպես կանոն վարկավորման պայմանների վերանայման այլ դեպքերում սույն սակագինը ենթակա է գանձման Մեծ վարկային կոմիտեի որոշմամբ:

Տոկոսադրույքների հաշվարկման կարգը

Վարկային գծի սահմաններում օգտագործված միջոցների դիմաց տոկոսները հաշվարկվում են փաստացի մնացորդի նկատմամբ՝ անվանական տոկոսադրույքի հիման վրա: Քարտերով վարկային գծերի չօգտագործված միջոցների դիմաց տոկոս չի հաշվարկվում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տարեկան փաստացի տոկոսադրույքը ցույց է տալիս, թե որքան կարժենա վարկը պատշաճ կերպով և պայմանավորված ժամկետներում պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարելու դեպքում: Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը կարող եք գտնել

www.ameriabank.am հասցեում:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Բանկն իրավունք ունի միակողմանի փոփոխել տոկոսադրույքի, ինչպես նաև սպասարկման վճարի չափը՝ կախված ֆինանսական շուկայից, Բանկի ներգրաված, ինչպես նաև շուկայում տեղաբաշխած միջոցների տոկոսադրույքների տատանումներից կամ եթե ֆինանսական շուկայում իրատեսական են դարձել վարկի տարեկան տոկոսադրույքի փոփոխման նախադրյալները:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վարկային գծի ժամկետից շուտ մարման սահմանափակումներ չկան:

Վարկավորման համար վարկառուի կողմից պարտադիր վճարման ենթակա վճարներ չեն սահմանվում, բացառությամբ անշարժ և շարժական գույքի գրավադրման, որի դեպքում գնահատումը և ապահովագրությունը կատարում է համապատասխան մասնագիտացած կազմակերպությունը՝ գանձելով միջնորդավճար կամ տոկոսագումար՝ համաձայն տվյալ կազմակերպության կողմից սահմանված սակագների և դրույքների:

Արտարժույթով տրամադրվող վարկային գծերի դեպքում արտարժույթի փոխարժեքի փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ տոկոսագումարի /գումարային արտահայտությանբ/ չափի վրա:

Վարկի հասանելիությունը սահմանափակող պայմաններ սահմանված չեն:Կանխավճարի մեծություն Տվյալ վարկատեսակի համար սահմանված չէ կանխավճարի մեծություն:Վարկի գումարի տրամադրման եղանակը Գումարը տրամադրվում է քարտով՝ անկանխիկ եղանակով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱՎԱԴՐՎԱԾ ԳՈՒՅՔԸ ԿԱՐՈՂ Է ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԲՌՆԱԳԱՆՁՎԵԼ, ԵԹԵ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐՎԵՆ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՐԿԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԵՎ/ԿԱՄ ՎԱՐԿԱՅԻՆ ԳԾԻ ԳՈՒՄԱՐԻ ՄԱՐՈՒՄՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԻՆ ՉԿԱՏԱՐԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՁԵՐ ԺԱՄԿԵՏԱՆՑ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ԿԳՐԱՆՑՎԻ ՎԱՐԿԱՅԻՆ ՌԵԳԻՍՏՐՈՒՄ:

ՎԱՏ ՎԱՐԿԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՆԱԼԸ ՁԵԶ ՀԱՄԱՐ ՀԵՏԱԳԱՅՈՒՄ ԿԱՐՈՂ Է ԽՈՉԸՆԴՈՏ ՀԱՆԴԻՍԱՆԱԼ ԱՅԼ ՎԱՐԿԵՐ ՍՏԱՆԱԼԻՍ:

Վարկային գծի տրամադրման մերժման գործոնները՝

- Վարկառուի կողմից ներկայացված տվյալները (փաստաթղթերը և այ տեղեկատվությունը) անարժանահավատ են կամ ոչ ամբողջական:
- Վարկառուն ունի ժամկետանց և/կամ դասակարգված պարտավորություններ (այդ թվում՝ երրորդ անձանց հանդեպ):

Քարտով վարկային գիծ ստանալու համար պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

- ✓ Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացվող փաստաթղթերի և տվյալների ցանկ (250,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթից ավելի վարկերի դեպքում) (11CB LI 72-04-01)
- ✓ Պոտենցիալ վարկառուի կողմից ներկայացվող փաստաթղթերի և տվյալների ցանկ (մինչև 250,000 ԱՄՆ դոլար կամ համարժեք այլ արժույթով վարկերի դեպքում) (11CB LI 72-04-01/1)

Տոկոսագումարի հաշվարկման օրինակ

Վարկային գծի սահմանաչափ – 5,000,000 ՀՀ դրամ

Օգտագործված մաս տվյալ ամսվա 8-ին - 1,000,000 ՀՀ դրամ

1. Եթե վարկառուն տվյալ ամսվա ընթացքում գծի սահմաններում օգտագործված գումարները ամբողջությամբ մարում է մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը (վճարման արտոնյալ ժամանակահատված), ապա օգտագործված գումարների վրա տոկոս չի հաշվարկվում,

2. Եթե վարկառուն մեկ/տվյալ ամսվա ընթացքում օգտագործված գումարները վճարման արտոնյալ ժամանակահատվածում չի մարում, ապա օգտագործված գումարների վրա օգտագործման առաջին իսկ օրվանից հաշվարկվում և կիրառվում է 15% տոկոսադրույքը, որը հաշվարկվում և կիրառվում է մինչև վճարման արտոնյալ ժամանակահատվածի ավարտման ամսվա վերջ, այդ թվում նաև այդ ընթացքում օգտագործվող/ված գումարների նկատմամբ

(1,000,000x15%/365*(22օր+30օր)=21,370 ՀՀ դրամ):

3. Այն դեպքում, երբ նշված վերջնաժամկետում օգտագործվող գումարները չեն զրոյացվում (մարվում), ապա հաջորդող ամսի մեկից սկսվում է հաշվարկվել և կիրառվել 20 տոկոս տոկոսադրույքը (1,000,000 *20%/365*3 0օր=16,438 ՀՀ դրամ):

4. Չնայած Տոկոսները ենթակա են պարտադիր վճարման վարկային գծի գործողության վերջնաժամկետում՝ (մինչև վճարման պահը կուտակված տոկոսներն ամբողջությամբ): Քարտային հաշվին յուրաքանչյուր մուտքի ժամանակ իրականացվում է այդ պահին հաշվարկված տոկոսների գանձում:

5. Տոկոսները համապատասխանաբար հաշվարկվում են այնքան ժամանակ, մինչև վարկառուն ամբողջությամբ չմարի մարման օրվա դրությամբ ձևավորված պարտավորությունները (օգտագործված գումարները ամբողջությամբ, դրանց վրա հաշվարկված տոկոսները և տուժանքները), որից հետո նոր միայն վարկառուն կարող է կրկին օգտվել վճարման արտոնյալ ժամանակահատվածի իր իրավունքից: